

Հանտատված է
ՀԳՊԱ գիտական խորհրդի
2018 թ. հունիսի 13
№ 1 որոշմամբ



Հաստատում էմ
ՀԳՊԱ գիտական խորհրդի
Խախատահ Ա. Բաբերեկյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2018թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի (այսուհետ՝ ՀԳՊԱ) գիտական խորհրդի ձևավորման և գործունեության կարգը, նիստերի նախապատրաստման և անցկացման, որոշումների ընդունման ընթացակարգը:
2. Մույն կանոնակարգը, դրա փոփոխությունները և լրացումները հաստատում է գիտական խորհուրդը՝ ՀԳՊԱ կանոնադրության հիման վրա:

II. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. ՀԳՊԱ գիտական խորհուրդը հանդիսանում է ակադեմիայի ուսումնական, մեթոդական, գիտական, հետազոտական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին:
4. Գիտական խորհրդի նախագահն ի պաշտոնե ակադեմիայի ռեկտորն է:
5. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:
6. Գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակն առնվազն մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում կարող են գումարվել գիտական խորհրդի արտահերթ նիստեր:
7. Գիտական խորհուրդը՝
 - 1) հաստատում է իր կանոնակարգը.
 - 2) համակարգում է ՀԳՊԱ կրթական և գիտական գործունեությունը.
 - 3) հաստատում է ակադեմիայի կրթական ծրագրերը, ըստ մասնագիտությունների և մասնագիտացումների.
 - 4) ըստ կրթական ծրագրերի՝ սահմանում է սովորողների ամփոփիչ ատեստավորման պահանջները.
 - 5) հաստատում է ասպիրանտուրայում, դոկտորանտուրայում, հայցորդության համակարգում ուսումնառելու պայմանները.
 - 6) հաստատում է ՀԳՊԱ ֆակուլտետների դեկանների, ամբիոնների ու կրթական խմբերի վարիչների, դասախոսների, պրոֆեսորների, դոցենտների և այլ ընտրովի պաշտոնների ընտրության կարգերը և այլ ընտրովի պաշտոնների ընտրության կարգը և իրականացնում ընտրության արդյունքների հաստատումը.
 - 7) քննարկում և ներկայացնում է առաջարկություններ նոր ստորաբաժանումներ՝ ֆակուլտետներ, ամբիոններ, կենտրոններ, հիմնարկներ, մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և այլ մարմիններ ստեղծելու վերաբերյալ, հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների

կանոնադրությունները՝ բացառությամբ տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև մասնաձյուղերի և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշման ընդունումը.

8) հրատարակության է երաշխավորում մենագրություններ, դասագրքեր, ուսումնական և ուսումնա-մեթոդական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր.

9) սահմանված կարգով շնորհում է դոցենտի ու պրոֆեսորի գիտական կոչումներ, ինչպես նաև պատվավոր պրոֆեսորի, պատվավոր դոկտորի և այլ կոչումներ, մեդալներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, ներկայացնում է թեկնածություններ՝ կոչումներ, պարգևներ, հանրապետական և միջազգային մրցանակներ ստանալու համար.

10) կարող է ստեղծել գիտական խորհրդի մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ և սահմանել դրանց ձևավորման կարգը և աշխատակարգը.

11) քննարկում է կրթության և գիտության զարգացման հիմնահարցեր, լսում գիտական հաղորդումներ, իրականացնում է սույն կանոնակարգից բխող՝ ուսումնական, մեթոդական, հետազոտական և կազմակերպչական գործունեության հետ կապված այլ լիազորություններ.

12) քննարկում և հաստատում է ըստ մասնագիտությունների ուսման վարձի չափը:

III. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

8. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը 29 է:

9. Գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են՝

1) ի պաշտոնե՝ ռեկտորը, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, ֆակուլտետների ղեկանները, մասնաձյուղերի տնօրենները, ուսումնական և գիտական ստորաբաժանումների ղեկավարները.

2) ամբիոնների վարիչներ, դասախոսներ, ստորաբաժանումների ղեկավարներ, գիտաշխատողներ, ուսանողության ներկայացուցիչներ, ինչպես նաև հանրապետության կրթության և գիտության առաջատար մասնագետներ.

3) ի պաշտոնե և ռեկտորի կողմից նշանակվող անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի անդամների թվի 50 տոկոսը.

4) ուսանողության ներկայացուցիչների առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է ակադեմիայի ուսանողական խորհուրդը: Ուսանողների

թիվը գիտական խորհրդում չի կարող պակաս լինել դրա անդամների թվի 25 տոկոսից.

5) ընտրովի անդամների համամասնությունը և կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող տեղերի չափաբաժինները որոշում է գիտական խորհուրդը՝ ռեկտորի առաջարկությամբ, իսկ ստորաբաժանումների անդամների ընտրությունը կատարվում է ֆակուլտետային խորհուրդների միջոցով:

10. Գիտական խորհրդի քարտուղարը և անվանական կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով՝ հինգ տարի ժամկետով:

IV. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ԵՎ ԱՆՑԱՑՈՒՄԸ

11. Գիտական խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:

12. Գիտական խորհրդի հերթական նիստերը գումարվում են տարեկան առնվազն երկու անգամ:

13. Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում է գիտական խորհրդի քարտուղարը:

14. Գիտական խորհրդի քարտուղարը գիտական խորհրդի նիստ (հերթական կամ արտահերթ) հրավիրելու և նիստի օրակարգի մասին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է գիտական խորհրդի անդամներին հերթական նիստի անցկացման օրվանից առնվազն հինգ օր առաջ, արտահերթ նիստի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ: Գիտական խորհրդի տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ փաստաթղթային փաթեթը (որոշումների նախագծեր, տեղեկանք-հիմնավորումներ և այլն) գիտական խորհրդի անդամներին ուղարկվում է նիստի անցկացման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ:

15. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել գիտական խորհրդի նախագահի առաջարկով, ինչպես նաև գիտական խորհրդի անդամների առնվազն 1/3-ի պահանջով: Գիտական խորհրդի նախագահն արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ գրավոր պահանջն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պարտավոր է ապահովել նիստի գումարումը: Արտահերթ նիստի գումարման պահանջը կարող է մերժվել եթե.

- պահպանված չէ արտահերթ նիստ գումարելու կարգը կամ պահանջում չի ապահովվել գիտական խորհրդի անդամների առնվազն 1/3-ի ստորագրությունների առկայությունը,
- արտահերթ նիստի օրակարգում առաջարկված հարցերից ոչ մեկը վերապահված չէ գիտական խորհրդի իրավասությանը և/կամ չի բխում ՀՀ օրենսդրությունից:

Գիտական խորհրդի արտահերթ նիստի գումարումը մերժելու մասին գրավոր ծանուցում-հիմնավորումը ուղարկվում է արտահերթ նիստի գումարումը պահանջող անդամներին կամ նախաձեռնող խմբին:

16. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավագործ՝ նրա անդամների 2/3-ի ներկայության դեպքում:

17. Գիտական խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է գիտական քարտուղարը՝ նիստն սկսելուց առաջ: Քվորումը չապահովելու դեպքում գիտական խորհրդի նախագահի որոշմամբ գրանցման գործընթացը կարող է երկարաձգվել մինչև 30 րոպե, իսկ դրանից հետո քվորում չապահովելու պարագայում նիստը հետաձգվում է:

18. Գիտական խորհրդի քվորումի բացակայության պատճառով հետաձգված նիստը՝ նույն օրակարգով, գումարվում է սույն կանոնակարգով սահմանված ընդհանուր հիմունքներով:

19. Ռեկտորը, բացելով գիտական խորհրդի նիստը, տեղեկատվություն է տրամադրում քվորումի առկայության վերաբերյալ և քվեարկության է դնում նիստի օրակարգը: Ռեկտորի հանձնարարությամբ գիտական խորհրդի նիստը կարող է վարել գիտական խորհրդի անդամներից որևէ մեկը:

20. Գիտական խորհրդի անդամները կարող են առաջարկել նիստի օրակարգում ընդգրկել այլ հարցեր, ինչը սահմանված կարգով դրվում է քվեարկության:

21. Նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ինչպես նաև ելույթների տևողությունը որոշում է գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ:

V. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

22. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե որոշում չի ընդունվում փակ գաղտնի քվեարկության մասին: Գիտական խորհրդի նիստերը կարող են անցկացվել

էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով:

23. Պաշտոնների զբաղեցման, գիտամանկավարժական պաշտոնների տեղակալման և գիտական կոչումների ներկայացման, ամբիոնի վարիչի ընտրության ու այլ մրցույթները կատարվում են փակ, գաղտնի քվեարկությամբ:

24. Փակ, գաղտնի քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկները պատրաստում է գիտական քարտուղարը՝ մինչև գիտական խորհրդի նիստը:

25. Քվեաթերթիկում նշվում է գիտական խորհրդի նիստի անցկացման ամսաթիվը, հերթական համարը, քվեարկության դրվող հարցի բովանդակությունը, քվեարկության հնարավոր տարբերակները («կողմ», «դեմ»):

26. Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահին, ըստ անհրաժեշտության, գիտական խորհրդին տեղեկատվություն է տրամադրում քվեարկության անցկացման և քվեաթերթիկի լրացման կարգի վերաբերյալ:

27. Քվեաթերթիկը վավերական է, եթե դրանում քվեարկվել է միայն մեկ տարբերակ:

28. Հաշվիչ հանձնաժողովի անդամներն առանձին սենյակում բացում են քվեատուփը և իրականացնում են քվեարկության արդյունքների հաշվառում:

29. Քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

30. Քվեարկության արդյունքները հաստատվում են գիտական խորհրդի կողմից՝ նույն նիստում:

VI. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

31. Գիտական խորհրդի որոշումները կիրարկվում են ռեկտորի հրամաններով:

32. Ռեկտորն իրավասու է կասեցնելու գիտական խորհրդի այն որոշումները, որոնք չեն բխում նրա լիազորություններից, հակասում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, ՀԳՊԱ կանոնադրությանը, սույն կանոնակարգին և ներքին իրավական այլ ակտերին:

33. Գիտական խորհրդի այն որոշումները, որոնք ռեկտորի կողմից կասեցվել են ընդունման ընթացքում ընթացակարգային խախտումներ թույլ տրվելու պատճառով, դրվում են վերաքննարկման և վերաքվեարկության գիտական խորհրդի նույն կամ այլ նիստում:

34. Գիտական խորհրդի որոշումների կասեցման մասին ռեկտորի հրամանները պետք է լինեն հիմնավոր և պատճառաբանված:

VII. ՆԻՍՏԵՐԻ ԱՐՃԱՆԱԳՐՈՒՄԸ

35. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունը երկու օրինակից կազմում է գիտական քարտուղարը գիտական խորհրդի նիստն ավարտվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, որը հրապարակվում է ՀԳՊԱ պաշտոնական կայքէջում: Արձանագրությունը ստորագրում են գիտական խորհրդի նախագահը և գիտական քարտուղարը:

36. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ամսաթիվը, նախագահը, քարտուղարը, քվեակազմը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերի բովանդակությունը, քվեարկության արդյունքները և գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները:

VIII. ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

37. Հաշվիչ հանձնաժողովը ստեղծվում է գիտական խորհրդի որոշմամբ: Յուրաքանչյուր նիստում հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատում է գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ՝ ըստ գիտական խորհրդի ցուցակային կազմի:

38. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է քվեարկություններ, պարզաբանում է քվեարկության ընթացքում առաջացող հարցերը, քվեարկության կարգը, ապահովում է քվեարկության կարգի պահպանումը, կազմում է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ և այն ներկայացնում է գիտական խորհրդի հաստատմանը:

IX. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

39. Գիտական խորհրդի որոշմամբ, ըստ անհրաժեշտության կարող են ստեղծվել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ (մրցութային, կանոնակարգերի մշակման և այլն), որոնց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունը և աշխատակարգը սահմանվում են գիտական խորհրդի կողմից:

40. Հանձնաժողովների խնդիրն է իրենց կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկության ներկայացումը:

41. Հանձնաժողովների կառուցվածքը և կազմը որոշում է գիտական խորհուրդը:

42. Հանձնաժողովներն իրենց ոլորտին վերաբերող հարցերը քննարկում են գիտական խորհրդի և/կամ ռեկտորի հանձնարարությամբ:

43. Հանձնաժողովներն իրավասու են ՀԳՊԱ մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր ու նյութեր:

44. Հանձնաժողովների նիստերն իրավագոր են հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում:

45. Հանձնաժողովների փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

46. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել գիտական խորհրդին:

**ՀԳՊԱ Գիտական խորհրդի ի պաշտոնե և ընտրովի անդամների համամասնությունը
և կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող տեղերի չափաբաժինները**

1. Գիտական խորհրդում ի պաշտոնե ընդգրկվող անդամներ
 - 1.1 Ռեկտոր
 - 1.2 Ուսումնագիտական գծով պրոռեկտոր
 - 1.3 Ֆինանսատնտեսական գծով պրոռեկտոր
 - 1.4 Գիտական քարտուղար
 - 1.5 Կերպարվեստի ֆակուլտետի դեկան
 - 1.6 Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան
 - 1.7 Գյումրու մասնաճյուղի տնօրեն
 - 1.8 Դիլիջանի մասնաճյուղի տնօրեն
 - 1.9 Ուսումնական վարչության պետ

2. Ընտրովի անդամներ
 - 2.1 Կերպարվեստի ֆակուլտետ - 6 անդամ
 - 2.2 Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետ - 6 անդամ

3. Ուսանողության ներկայացուցիչներ
 - 3.1 Կերպարվեստի ֆակուլտետ - 4 անդամ
 - 3.2 Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետ - 4 անդամ